

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2015 թ. մարտի 2-7-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 46-րդ նստաշրջանին,
- ✓ 2015 թ. մարտի 5-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Միգրացիոն տվյալների կառավարում և միգրացիոն միտումները» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015 թ. մարտի 10-11-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Կանաչ աճ» և Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգին (ԷՄՏՀ) նվիրված սեմինարին,
- ✓ 2015 թ. մարտի 10-12-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ վիճակագրության համար» խորագրով գիտաժողովին,
- ✓ 2015 թ. մարտի 31-ից ապրիլի 1-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Գ. Անանյանը մասնակցել են ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Բիզնես վիճակագրության կատարելագործումը և ՓՄՁ քաղաքականության մշտադիտարկումը Արևելյան Գործընկեր և ԵՄ անդամակցության հավակնորդ երկրներում» խորագրով փորձագետների սեմինարին,
- ✓ 2015 թ. ապրիլի 13-17-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ստանբուլում (Թուրքիա) կայացած «Շրջակա միջավայրի տեղեկատվական համակարգ» խորագրով տարածաշրջանային կոնֆերանսին; «Գլոբալ Էկոլոգիական Առաջընթաց՝ ԳԷԱ-6» խորագրով տարածաշրջանային խորհրդակցությանը; Մշտադիտարկման և տեղեկատվության հարցերով Եվրամիության հարևանության և գործընկերության երկրների աշխատանքային խմբի 16-րդ նստաշրջանի աշխատանքներին,
- ✓ 2015 թ. ապրիլի 14-17-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած «Ընտրանքային մեթոդներ» թեմայով ուսումնական դասընթացին,
- ✓ 2015 թ. ապրիլի 16-17-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Կիևում (Ուկրաինա) կայացած Ընդհանուր վիճակագրական օրենքի խմբագրական խորհրդի հանդիպմանը,